

**ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԽԱՆՏՈՒՄՆԵՐ՝ ԹԵՂՈՒՏԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ  
ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ**

2007թ.

Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային կոնվենցիաներ.

1. Կենսաբազմազանության մասին՝ կոնվենցիան, Ռիո-Դե-Շանեյրո, 1992թ. (վավերացված ՀՀ Գերագույն խորհրդի կողմից 1993թ. մարտի 31-ին),
2. Կլիմայի փոփոխության մասին՝ ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիան, Նյու Յորք, 1992թ. (վավերացված ՀՀ Գերագույն խորհրդի կողմից 1993թ. մարտի 29-ին),
3. Անապատացման դեմ պայքարի մասին՝ կոնվենցիան, Փարիզ, 1994թ. (վավերացված ՀՀ Ազգային ժողովի կողմից 1997թ. հունիսի 23-ին),
4. Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին՝ կոնվենցիան, Օրհուս 1998թ. (վավերացված ՀՀ Ազգային ժողովի կողմից 2001թ. մայիսի 14-ին),
5. Միջսահմանային կոնտեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին՝ կոնվենցիա, Էսպո, 1991թ.
6. Լանդշաֆտների մասին՝ կոնվենցիան, Ֆլորենցիա, (վավերացված ՀՀ Ազգային ժողովի կողմից 2004թ. մարտի 23-ին),
7. Մշակույթի և բնության ժառանգության պահպանման մասին՝ UNESCO-ի կոնվենցիա:

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ /2005/**

Հոդված 10. Պետությունը ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերարտադրությունը, բնական պաշարների բանական օգտագործումը:

Հոդված 31. Մեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը:

Հոդված 33.2. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում, պարտավոր է անձամբ և այլոց հետ համատեղ պահպանել և բարելավել շրջակա միջավայրը:

Պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում բնապահպանական տեղեկատվությունը թաքցնելու կամ դրա տրամադրումը մերժելու համար:

**ԲՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ**

Հոդված 14. Շրջակա միջավայրի վրա ազդող տնտեսական և այլ նախագծերի մշակումն ու իրականացումը

Շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունը կանխարգելելու նպատակով քաղաքաշինական, տնտեսական և այլ գործունեության վերաբերյալ նախագծերը պետք է ունենան էկոլոգիական հիմնավորում, որոնք պատվիրատուն մինչև նախագծերի հաստատումը ներկայացնում է բնության պահպանության լիազորված պետական մարմին:

Արգելվում է նախագծերի մշակումն ու իրականացումը, որոնք կարող են խախտել բնական հավասարակշռությունն ու էկոլոգիական համակարգերը, ոչնչացնել բույսերի և կենդանիների գենետիկ ֆոնդը կամ մարդու առողջության և բնական միջավայրի համար առաջացնել այլ անուղղելի հետևանքներ:

## **ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔ**

/20 նոյեմբեր, 1995 թ./

### **Հոդված 3. Փորձաքննության խնդիրները**

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության խնդիրներն են՝  
.... - ստուգել շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության, հայեցակարգի և դրանց այլընտրանքների հնարավոր էկոլոգիական ազդեցության աստիճանը, հետևանքների վերլուծման ամբողջականությունը և ստույգությունը, այդ հետևանքների կանխարգելման, վերացման կամ նվազեցման համար նախատեսված միջոցառումների բավարարությունը՝ ինչպես շահագործման և իրականացման գործընթացում, այնպես էլ՝ արտակարգ իրավիճակների ժամանակ;

- ապահովել բնական պաշարների արդյունավետ, բանական օգտագործումը;
- արգելել շրջակա միջավայրի վրա անդառնալի վնասակար ազդեցություն ունեցող ցանկացած նախատեսվող գործունեություն, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այլ բան չի նախատեսված.
- ապահովել հասարակության ներգրավումը և մասնակցությունը փորձաքննության բոլոր փուլերում:

### **Հոդված 5. Փորձաքննության շրջանակները**

#### **1. Փորձաքննությունն առնվազն պետք է ընդգրկի՝**

ա. նախատեսվող գործունեության հնարավոր ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշում, նկարագրում և գնահատում՝

- կլիմայական պայմանների, բուսական ու կենդանական աշխարհի, էկոհամակարգերի առանձին տարրերի, նրանց փոխհարաբերության ու կայունության, բնության հատուկ պահպանվող տարածքների, լանդշաֆտի, երկրաձևաբանական կառույցների, օդի, մակերեսային և ստորերկրյա ջրերի, ընդերքի, հողի,

- բնակչության առողջության և բարեկեցության,
- բնակավայրերի շրջակա միջավայրի,
- բնական պաշարների օգտագործման ,

- պատմամշակութային հուշարձանների նկատմամբ;

3. Նախատեսվող գործունեության ադդեցության փորձաքննության ընթացքում հաշվի են առնվում տվյալ տարածքի պատմամշակութային առանձնահատկությունները:

Հոդված 9. Փաստաթղթերի փորձաքննության վերաբերյալ մասնագիտական եզրակացության ապահովումը

1. Մասնագիտական եզրակացությունը կարող են մշակել միայն լիազորված անձինք, որոնք ստացել են լիազորված մարմնի կողմից տրված մասնագիտական իրավասության հավաստագրեր:

5. Փաստաթղթերը ստանալուց հետո 70-օրյա ժամկետում լիազորված մարմինը լիազորված անձանց միջոցով ապահովում է փաստաթղթերի վերաբերյալ մասնագիտական եզրակացությունների մշակումը:

Մասնագիտական եզրակացության մշակման ընթացքում հաշվի են առնվում հասարակական, ազդակիր համայնքի և համապատասխան պետական մարմինների կարծիքները, հիմնավորելու դեպքում լիազորված մարմինը կարող է նշված ժամկետը երկարացնել, բայց ոչ ավել քան 180 օր:

7. Մասնագիտական եզրակացությունը մշակելիս փորձաքննության են ենթարկվում՝

ա) փաստաթղթերի լիարժեքությունը,  
բ) հասարակության, ազդակիր համայնքի և պետական շահագրգիռ մարմինների կարծիքները,

գ) շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության բոլոր դրական և բացասական ազդեցությունների առկայության ամբողջականությունը, ինչպես նաև՝ դրանց փոխներգործությունը.

դ) կիրառված գնահատման մեթոդները և տեղեկատվության ամբողջականությունը,  
ե) շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության վերացման կամ նվազեցման նպատակով առաջարկված տեխնիկական լուծումների համապատասխանությունը ժամանակակից տեխնիկական մակարդակին,

զ) նախատեսված գործունեության այլընտրանքային լուծումները,  
է) շրջակա միջավայրի վրա նախատեսված գործունեության վնասակար ազդեցության բացառման կամ նվազեցման, ինչպես նաև՝ նախատեսված գործունեության կիրառման և շահագործման միջոցառումների և անհրաժեշտ պայմանների վերաբերյալ առաջարկությունները:

8. Մասնագիտական եզրակացությունը պարունակում է առաջարկություն դրական կամ բացասական փորձաքննական եզրակացության վերաբերյալ:

Հոդված 10. Փաստաթղթերի վերաբերյալ մասնագիտական եզրակացության հասարակական լուծումների կարգը

1. Մասնագիտական եզրակացությունը ստանալուց հետո 30-օրյա ժամկետում լիազորված մարմինն ապահովում է մասնագիտական եզրակացության, հասարակական կարծիքի, ազդակիր համայնքի ղեկավարների, ազդակիր համայնքների և համապատասխան պետական մարմինների կարծիքների հասարակական լուծումներ:

2. Լիազորված մարմինն առնվազն 7 օր առաջ գրավոր իրազեկ է պահում ձեռնարկողին, մարզի կամ համայնքի ղեկավարներին, ազդակիր համայնքներին, համապատասխան պետական մարմիններին և լիազորված անձանց հասարակական լուսմների ժամկետի և անցկացման տեղի մասին:

Հասարակական լուսմներին կարող են հրավիրվել այլ փորձագետներ և մասնագետներ:

3. Լիազորված մարմինը հասարակայնության տեղեկացման հաղորդագրի մեջ նշում է հասարակական լուսմների ձևը և արարողակարգը:

4. Սույն հոդվածի 1-ին կետում նշված մասնակիցները լիազորված մարմնի կողմից ստանում են հասարակական լուսմների արդյունքների արձանագրությունը:

Հոդված 11. Նախատեսվող գործունեության վերաբերյալ փորձաքննական եզրակացության տրման կարգը

1. Լիազորված մարմնի կողմից հասարակական լուսմներից հետո 20-օրյա ժամկետում կայացվում է որոշում մասնագիտական եզրակացության և հասարակական քննարկումների արդյունքների արձանագրությունների հիման վրա փորձաքննական եզրակացություն տալու մասին:

Հոդված 17. Լիազորված մարմնի պատասխանատվությունը

1. Լիազորված մարմինը պատասխանատու է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության՝

- եզրակացության հիմնավորվածության,
- սկզբունքների, կանոնակարգերի, նորմերի և ժամկետների պահպանման,
- անհրաժեշտ փաստաթղթերի և նյութերի ապահովման,
- աշխատանքային անհրաժեշտ պայմանների ապահովման,
- հրապարակայնության համար:

2. Լիազորված մարմինը պատասխանատու է 4-րդ հոդվածի 4-րդ կետից բխող որոշման համար :

Հոդված 18. Լիազորված անձանց պատասխանատվությունը

Լիազորված անձինք՝ մասնագիտական եզրակացությունը մշակելիս պատասխանատու են՝

- եզրակացության, եզրահանգման, առաջարկությունների և դիտողությունների հիմնավորվածության,
- փաստաթղթերի անկողմնակալ գնահատման,
- մասնագիտական եզրակացությունը լիազորված մարմին սահմանված ժամկետում ներկայացնելու համար:

**ՀՀ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ /02.05.2001թ./**

Հոդված 8. Հողամասերի թույլատրված օգտագործումը

1. Հողամասի թույլատրված օգտագործումը հողամասի օգտագործումն է դրա նպատակային և գործառնական նշանակությամբ, ներառյալ՝ սահմանված իրավունքները և սահմանափակումները:

Հողամասի թույլատրված օգտագործումը սահմանվում է նորմատիվ իրավական ակտերի, հողերի գոտևորման և օգտագործման սխեմաների, քաղաքաշինական, հողաշինարարական փաստաթղթերի հիման վրա:

2. Հողամասի թույլատրված օգտագործումը կարող է պարունակել պահանջներ, որոնք ուղղված են՝

1/ հողամասի օգտագործման միջոցների և դրանց այն մասի արգելմանը, որոնք հանգեցնում են հողի որակի ու բերրիության անկմանը կամ շրջակա բնական միջավայրի վատթարացմանը,

4/ մարդու առողջության վրա վնասակար ազդեցություն թողնող կամ դրա վտանգի մեծացման հետ կապված հողօգտագործման ձևերին,

5/ շրջակա բնական միջավայրի վրա ազդեցության թույլատրելի նորմերին,

6/ կանաչ տնկարկների պահպանմանը,

7/ հողերի անապատացման, հողատարման, աղտոտման, ճահճացման, աղակալման և այլ երևույթների կանխարգելման միջոցառումների իրականացմանը,

8/ հողերի պահպանության և խախտված հողերի վերականգնման միջոցառումների իրականացմանը,

9/ հողերի վրա բնապահպանական համակարգերի, սանիտարահիգիենիկ պայմանների ամբողջականության, կենսաբազմազանության պահպանման միջոցառումների ապահովմանը,

10/ օրենքներով և պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների նորմատիվ իրավական ակտերով սահմանված գյուղատնտեսական, քաղաքաշինական, բնապահպանական, պատմական և մշակութային արժեքների ու պատմական միջավայրի պահպանությանն ուղղված միջոցառումներին:

Հոդված 23. Պատմական և մշակութային հողերը

2. Պատմական և մշակութային հողամասերի վրա արգելվում է դրանց նպատակային և գործառնական նշանակությանը հակասող ցանկացած գործունեություն:

3. Պատմական և մշակութային նշանակության հողերում սեփականատերերի, օգտագործողների հողամասերը պետության կամ համայնքի կարիքների համար չեն վերցվում, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Պատմական և մշակութային հողերում, ներառյալ՝ հետազոտման և կոնսերվացման ենթակա պատմական և մշակութային օբյեկտների հողերում, կարող է արգելվել ամեն մի տնտեսական գործունեություն, բացառությամբ պահպանության գոտու օբյեկտների զարգացմանն ու սպասարկմանն ուղղված գործունեության:

**ՀՀ ՋՐԱՅԻՆ ՕՐԵՆՍՊԻՐՔ / 4 հունիսի, 2002թ./**

Հոդված 103. Ջրային էկոհամակարգերի վրա ազդող շինարարական և այլ օբյեկտների նկատմամբ ներկայացվող պահանջները

... Ջրային համակարգերի կամ ջրային ռեսուրսների վրա ազդող օբյեկտների շինարարական և վերակառուցման աշխատանքների նախագծային փաստաթղթերի

փորձաքննությունն իրականացնում են համապատասխան լիցենզիա ունեցող անձինք:

Շինարարական և այլ օբյեկտի նախագծման, շինարարության, վերակառուցման, օգտագործման հանձնման և օգտագործման ընթացքում պետք է հաշվի առնվի դրա ազդեցությունը շրջակա միջավայրի վրա՝ ինչպես անմիջական տեղադրման գոտում, այնպես էլ՝ ջրահավաք ավազանի վրա ամբողջությամբ:

## **ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՍԳԻՐՔ**

/18 նոյեմբերի, 2002թ./

### **Հոդված 8. Ընդերքօգտագործման սահմանափակումը**

1. Մարդու առողջությունը, ազգային անվտանգությունը և շրջակա միջավայրի պահպանությունն ապահովելու նպատակով ընդերքի առանձին տեղամասերի օգտագործումը կարող է սահմանափակվել կամ արգելվել ՀՀ օրենքներով և իրավական այլ ակտերով:

Հոդված 42. Ընդերքօգտագործողների հիմնական իրավունքները և պարտականությունները

2. Ընդերքօգտագործողները պարտավոր են ապահովել՝

7) ընդերքի, մթնոլորտի, հողի, անտառների, ջրերի և շրջակա միջավայրի մյուս օբյեկտների, ինչպես նաև շինությունների և այլ կառույցների պահպանությունն ընդերքի օգտագործման հետ կապված աշխատանքների վնասակար ազդեցությունից;

8) բնության, պատմական և մշակույթի հուշարձանների պահպանությունն ընդերքի օգտագործման հետ կապված աշխատանքների վնասակար ազդեցությունից:

Հոդված 51. Ընդերքի պահպանության հիմնական պահանջները

Հայաստանի Հանրապետությունում ընդերքը ենթակա է պահպանության:

1. Ընդերքի պահպանության հիմնական պահանջներն են՝

4) օգտակար հանածոների պաշարների լիակատար կորզումը և հիմնական ու համատեղ գտնվող օգտակար հանածոների և դրանց ուղեկցող բաղադրամասերի արդյունավետ օգտագործումը,

5) ընդերքօգտագործման հետ կապված աշխատանքների վնասակար ազդեցության բացառումը,

2. Սույն հոդվածի պահանջների խախտման դեպքում լիազորված մարմինը ՀՀ կառավարության սահմանած կարգով սահմանափակում, դադարեցնում կամ արգելում է ընդերքից օգտվելը:

## **ԱՆՏԱՌԱՅԻՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ /24 հոկտեմբերի, 2005թ./**

Հոդված 20. Անտառային տնտեսության վարման հետ չկապված աշխատանքներ կատարելու կարգը

1. Պետական անտառային հողերում անտառային տնտեսության վարման և անտառօգտագործման հետ չկապված շինարարական ու պայթեցման աշխատանքների, օգտակար հանածոների արդյունահանման, մալուխների, խողովակաշարերի և այլ կոմունիկացիաների անցկացման, հորատման և այլ աշխատանքներն իրականացվում են պետական կառավարման լիազորված մարմնի տված համաձայնության հիման վրա: Համաձայնությունը տրվում է բնապահպանական փորձաքննության դրական եզրակացության հիման վրա:

Հոդված 46. Անտառների կամ անտառային հողերի օգտագործման իրավունքների սահմանափակումները

1. Պետության և համայնքների սեփականություն համարվող անտառների կամ անտառային հողերից տրամադրված կամ այլ հիմքերով ձեռք բերված անտառների կամ անտառային հողերի նկատմամբ օգտագործողների իրավունքները կարող են սահմանափակվել՝

4) անտառային հողերի նպատակային օգտագործման փոփոխման արգելքով,

5) բնապահպանական պահանջների պահպանման կամ որոշակի աշխատանքներ կատարելու, ներառյալ՝ կենդանական աշխարհը, հողաշերտը, հազվագյուտ բույսերը, բնության, պատմության ու մշակույթի հուշարձանները, հնեաբանական օբյեկտները պահպանելու պայմանով,

7) վայրի կենդանիների գոյության, բնական միջավայրի և միգրացիայի ուղիների պահպանման պայմանով,

8) անտառաշինական նախագծերին չհամապատասխանելու դեպքերում,

9) այլ պարտավորություններով, սահմանափակումներով կամ պայմաններով:

Հոդված 60. Անտառային օրենսդրության խախտման դեպքերը

1. Անտառային օրենսդրության խախտման դեպքերն են՝

բ) անտառային հողերում ծառերն ու թփերը հատելը և արմատախիլ անելը, ե/ անտառները քիմիական և ռադիոակտիվ նյութերով, արտադրական կեղտաջրերով, արդյունաբերական արտանետումներով, կենցաղային մնացուկներով և արտադրական թոփոններով աղտոտելը,

գ) անտառները ոչնչացնելը կամ վնասելը,

ժ) անտառային հողերի բերրի շերտը վնասելը կամ ոչնչացնելը, անտառներում սանիտարական կանոնները խախտելը,

ժգ) անտառի կենդանական աշխարհի օբյեկտներին վնաս հասցնելը,

ժը) առանց անտառի վրա վնասակար ազդեցությունը կանխող կայանքների արտադրական օբյեկտները շահագործման հանձնելը,

**ՔՐԻՍՏԻՆԵ ԱՆՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆՆԵՐԻ ՀՀ օրենք**

/23 նոյեմբերի, 1999թ./

Հոդված 15. Բուսական աշխարհի պահպանության և պաշտպանության խնդիրները

Հայաստանի Հանրապետությունում բուսական աշխարհի պահպանության և պաշտպանության խնդիրներն են՝

- ա) ապահովել բուսական աշխարհի բազմազանության ամբողջականությունը,
- բ) կանխել բուսական աշխարհի օբյեկտների ապօրինի օգտագործումը,
- գ) բուսական աշխարհի օբյեկտների աճելավայրերը տնտեսական նպատակներով շահագործելու ժամանակ ապահովել ՀՀ բնության պահպանության մասին օրենսդրության պահանջների կատարումը,
- դ) ապահովել բուսական ծածկույթի ջրապահպան, հողապաշտպան, կլիմայակարգավորիչ և ռեկրեացիոն հատկությունների անխաթարությունը,

Հոդված 17. Արգելվում է ցանկացած գործունեություն, որը հանգեցնում է Հայաստանի Հանրապետության բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակների թվաքանակի կրճատմանը և դրանց աճելավայրերի վատթարացմանը:

### **ԿԵՆՂԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔ**

/ 3 ապրիլի, 2000թ./

Հոդված 18. Կենդանական աշխարհի հազվագյուտ և անհետացման եզրին գտնվող օբյեկտների պահպանությունը

.....Բնական պաշարներն օգտագործողները, որոնք տնտեսական կամ այլ աշխատանքների ընթացքում վնաս են հասցնում ՀՀ Կարմիր Գրքում գրանցված կենդանիներին, պարտավոր են միջոցներ ձեռնարկել դրանց պահպանության համար: Արգելվում է ցանկացած գործունեություն, որը կհանգեցնի ՀՀ կենդանիների Կարմիր Գրքում գրանցված տեսակների թվաքանակի կրճատմանը և դրանց ապրելավայրերի վատթարացմանը:

### **ՄԹՆՈՒՈՐՏԱՅԻՆ ՕՂԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔ**

/1 նոյեմբերի, 1994թ./

Հոդված 21. Մթնոլորտային օդի վիճակի վրա ազդող ձեռնարկությունների, կառույցների և այլ օբյեկտների տեղաբաշխման, նախագծման, կառուցման և գործարկման պայմանները

Նոր և վերակառուցված ձեռնարկությունների, կառույցների և այլ օբյեկտների տեղաբաշխման, նախագծման, կառուցման և գործարկման, գոյություն ունեցող տեխնոլոգիական գործընթացների և սարքավորումների կատարելագործման ու նորերի ներդրման դեպքում անհրաժեշտ է ապահովել մթնոլորտային օդի վիճակի վրա վնասակար ներգործության նորմատիվների պահպանումն ու նվազեցումը: Ընդ որում, պետք է նախատեսվեն վնասակար նյութերի և արտանետումների որսումը, օգտահանումը, վնասազերծումը կամ մթնոլորտային օդն աղտոտող նյութերի արտանետման լիակատար բացառումը, մթնոլորտային օդի պահպանության մյուս պահանջների կատարումը, ելնելով այն բանից, որ նախագծվող, գործող և ապագայում կառուցվող ձեռնարկությունների, կառույցների և այլ օբյեկտների արտանետումները, ինչպես նաև՝ ֆիզիկական վնասակար ներգործությունները



միասին չհանգեցնեն մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների նորմատիվների և մթնոլորտային օդի վրա ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի նորմատիվների գերազանցմանը:

ՀՀ տարածքում մթնոլորտային օդի վիճակի վրա ազդող նոր և վերակառուցվող ձեռնարկությունները, կառույցները տեղաբաշխելու վերաբերյալ առաջարկությունները քննարկվում են ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով:

Մթնոլորտային օդի վիճակի վրա ներգործող բոլոր ձեռնարկությունների, կառույցների և այլ օբյեկտների տեղի ընտրությունը և դրանց կառուցման ու վերակառուցման նախագծերն էկոլոգիական փորձաքննության են ենթարկվում բնության պահպանության բնագավառում հատկապես լիազորված մարմինների կողմից՝ հասարակական կազմակերպությունների և անկախ փորձագետների մասնակցությամբ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 22. Սանիտարապաշտպան գոտիների ստեղծումը

Մթնոլորտային օդի վիճակի վրա ներգործող նոր ձեռնարկությունների, կառույցների և այլ օբյեկտների տեղի ընտրության, գործող ձեռնարկությունների, կառույցների և այլ օբյեկտների վերակառուցման կամ ընդլայնման դեպքում նախատեսվում է սանիտարապաշտպան գոտիների ստեղծում: Սանիտարապաշտպան գոտիները և դրանց պահպանման ռեժիմը սահմանվում են ՀՀ կառավարության կողմից:

Հոդված 23. Մթնոլորտային օդի վիճակի վրա ներգործող ձեռնարկությունները, կառույցները և այլ օբյեկտները շահագործման հանձնելու պայմանները

Արգելվում է մթնոլորտային օդի պահպանության պահանջները չբավարարող նոր և վերակառուցվող ձեռնարկությունների, կառույցների և այլ օբյեկտների շահագործման հանձնումը: